ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-232[20]-11.04.2022-ՊԻ-011/0) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» 2005 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-85-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասում «արդարացնող» բառը փոխարինել «ռեաբիլիտացնող» բառով:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը «դատախազի» բառից հետո լրացնել «կամ քննիչի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում «հակակոռուպցիոն կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ դեպքերով կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններ՝ պետական ծառայություն իրականացնող անձանց այլ հանցագործությունների վերաբերյալ դեպքերով» բառերը փոխարինել «նախաքննության մարմին՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան» բառերով:

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի~~ում՝~~

~~ա)~~ «ա)» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) ոստիկանության ծառայողի վերաբերյալ նախաքննության մարմին ուղարկված նյութերով մինչև քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կազմելը կամ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելը կամ եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելը.».

~~բ) «բ)» կետն ուժը կորցրած ճանաչել.~~

~~գ) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «է)» կետ.~~

~~«է) փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ մինչև փորձագիտական եզրակացության ստացումը:».~~

~~2) 2-րդ մասի 4-րդ նախադասության մեջ ««բ» և «գ» կետերով» բառերը փոխարինել ««գ», «դ» և «է» կետերով» բառերով.~~

2~~3~~) 2.1-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:~~.~~

~~4) 3-րդ մասից հանել ««բ»,» բառը և կետադրական նշանը:~~

~~**Հոդված 5.** Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ)» կետով.~~

~~«գ) ծառայողական քննության արդյունքում հայտնի չի դառնում ոստիկանության այն ծառայողը, որն այդ գործով պետք է ենթարկվի կարգապահական տույժի, և կատարվել են խախտում կատարելու մեջ կասկածվող ծառայողի հայտնաբերելուն ուղղված անհրաժեշտ բոլոր գործողությունները:».~~

~~**Հոդված 6.** Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«է) կայացնել փորձանմուշներ ստանալու որոշում և նշանակել փորձաքննություն.»:~~

Հոդված 5~~7~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը: